

Березин

Удостоверение
№ 278

891.99.092

92

R-22

2

52
S. 10-11/5

891.97.072
79-22

30 MAY 2011

ՔԱՅԲԵՐՈՒՆԻ

47

ՄՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՇՈՒՐԶԸ

ՎԱԹՍՈՒՆԱԿԱՆ ԹՈՒՆԿԱՆՆԵՐՈՒՄ



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Էլեկտրագրի Տպարանի Մայր Արժույթ

1917

29 JUL 2013

66.576

Մ Տ Ե Փ Ա Ն Ը Ո Ս Լ Ա Չ Ա Ր Ե Ա Ն Ց Ի Շ ՈՒ Ր Չ Ը

Վաքսուճական բուսականներում.

I

Նազարեանցի ծննդիտան հարիւրամեակը. Վաքսուճական բուսականների «ժողովները». Յիսնական բուսականների ուսանողութիւն ու ուսանողները Մոսկուայում. Հայրապետ Վարդապետեանց. Ս. Նազարեանց եւ Մսեր Մսերեանց ուսանողական «ժողովում». Մանուկ Սաղաբեան. Ռուբեն Ջալալեան. Սեփանոս Ասեփանէ. Սմբատ Շահագիր:

Անցեալ 1912 թուականի դեկտեմբերի 25-ին լրացաւ Ստեփաննոս Նազարեանցի ծննդեան հարիւրամեակը: Առիթ ունենալով այս հանգամանքը՝ հայկական ընթացիկ գրականութեամբ զբաղուող հայ երիտասարդութիւնը թիֆլիզում և Բազում ուղարկութեան առաւ Ստեփաննոս Նազարեանցի գրական գործունէութիւնը հայկական գրականական ասպարիզում:

Ես որպէս մօտ ծանօթ Ս. Նազարեանցին և կարճ ժամանակեայ աշխատակից «Հիւսիսափայլի», լսելով և կարդալով ներկայումս զարթեցրած հարցերը Նազարեանցի գործունէութեան վերաբերութեամբ, բնական էր, որ պիտայից վերանորոգէի յիշողութեանցս մէջ վաղուց անցած գնացած հանգամանքներ, որոնք գուցէ անծանօթ են շատերին և մանաւանդ նրանց, որոնք այժմ զարթեցնում են Նազարեանցի յիշատակը և որոնք գուցէ կվամենային աւելի մօտ կանգնած լինել Նազարեանցի գրական գործունէութեանը:

Բայց որովհետև Նազարեանցին անմիջապէս շրջապատողները և աշխատակիցները Մոսկուայի համալսարանի վաթսուճական թուականների ուսանողներն էին՝ ուստի ինձ համար բնական է, որ առաջին նուազ հարկաւոր է մտաբերել այդ ուսանողութիւնը: Օտարութեան մէջ ապրող հայ ուսանողները մի տեսակ կարիք էին զգում միմեանց մօտենալ, միմեանց հանդիպել, իրար հետ շփուել և հէնց այդ զգացմունքից՝ իւրաքանչիւր տօն և կի-



1389-51

բակի օրերում հաւաքուում էին հայոց եկեղեցում պատարագում ներկայ լինելու:

Իւրաքանչիւր շաբաթ երեկոյ հայ ուսանողները հաւաքուում էին առանձին սենեակ, որ վարձուած էր ուսանողական անդամակցական դուժարով և ուր ապրում էր մի չքաւոր ուսանող, ուսանողական վճարից նպաստ ստացող, որ պարտաւոր էր սենեակը մաքուր պահել: Այդ խմբումն կոչուում էր «ժողով»: Սա ունէր իւր ընտրովի նախագահը և քարտուղարը:

Ժողովի նիստերում ուսանողները զբաղուում էին հայերէն խօսակցութեամբ, վիճարանութեամբ, արծարծում էին մի որևէ գիտնական, կամ ազգայնական հարց, կարգում էին հայերէն յօդուած, թարգմանութիւն, ուֆերատ ևն, կազմակերպում էին թատերական ներկայացումներ, զբաղում էին երբեմն ուսանողական կենցաղի հարցերով ևն:

Ուսանող Ալադաթեանը այդ տեղ կարգաց իւր նոր դրած «Վայ իմ կորած 50 սակի» կատակերգութիւն. Ստեփաննոս Ստեփանեանց-Ստեփանէ կարգում էր իւր ոտանաւորները Իշխան Բազրատունի ստորագրութեամբ, Գարբիէլ Տէր Յովհաննիսեանցը կարգացել է իւր անդրանիկ վէպը զիւղական որսորդական կեանքից առած, որ մինչև այժմ էլ մնացել է սևագրութեամբ նրա մօտ: Գէորգ Բանանեանը, որ արդէն ոււարտել էր համալսարանը յիօնական թուականների վերջերում և երբեմն այցելում էր ժողովը, առաջին անգամ կարգաց ժողովում Ռափայէլ Պատկանեանեանցի ձեռագիր «Բաջ Վարդան Մամիկոնեանի մահը» աշխատութիւնը Պետերբուրգից ուղարկուած. ևն ևն:

Այս խօսքերս վերաբերում են 1860 թուականին, որ ես նոր ընդունուած էի համալսարանի ուսանողական շաբթը և ուրեմն իրաւունք էի համարում ինձ մասնակցել ուսանողական ժողովներին:

Սակայն յիշատակածս ժողովները վաթսուական թուականների ուսանողութեան արապրութիւնները չէին: Նրանք ժառանգաբար անցել էին յիօնական թուականների վերջին տարիների հայ ուսանողներից, որոց թուին պատկանում էին Մնացական Թիմուրեան Գանձակեցի, Յարութիւն Համասիւրու Գանձակեցի, Տէր Գրիգորեանց Թիֆլիզցի, Միք. Շահպարտեանեանց Գանձակեցի, Յովհաննէս Սատիսեան Թիֆլիզցի, Գէորգ Բանանեան Աղլարցի, Հայրապետ Վարդապետեան Բազուցի. և այլք:

Ոմանք այս ուսանողներից, Ռափայէլ Պատկանեանցի առաջնորդութեամբ, զեռ ևս յիսնական թուականների վերջում աշխատում էին հայ գրական սպարիղում. նրանք հրատարակում էին փոքրիկ բրօշուրներ «Գամառ Քաթիպա» անունն տակ:

Ի՞նչ են նշանակում այս երկու անձանօթ բառերը: Նրանք կաղնուած են Գէորգ Բանանեանի, Մնացական Թիմուրեանի և Ռափայէլ Պատկանեանի անուանց և ազգանուանց բաղաձայն սկզբնատառերից՝ շողկապած կամաւորապէս ձայնաւոր տառերով:

Վերոյիշեալ յիսնականներից ոմանք, որոնք զեռ չէին հեռացել Մոսկուայից՝ երբեմնակի այցելում էին ժողովներին, իւրեանց փորձառութեամբ ուղեցոյց էին լինում վաթսուական թուականների ուսանողներին. ոմանք իւրեանց աղգային ձգտումներով ոգևորիչ էին հանդիսանում նորերին:

Յիշում եմ Հայրապետ Վարդապետեանցին, որ ոգևորուած իւր մտադրութեամբ յայտնում էր, որ ինքը իւր երիտասարդ ոյժը ու զործունէութիւնը պէտք է զոհի ս. էջմիածնի վանքական անտեսութեան . . . Եռանց հրաւերել, մութը ապագայով, բայց անզուսպ տենչով նա ձգտում էր զէպլի էջմիածին տանելով իւր հետ իւր թարմ գիտութիւնը—նա ընագէտ էր:

Յիշում եմ թէ ինչպէս 1860 թուականի ցուրտ աշնանը մենք, մի քանի ուսանողներս, Յովսէփ Իզմիրեանցի հետ, որ Վարդապետեանցին ուժգին քաջալիրողներից գլխաւորն էր, ուղեկցեցինք Վարդապետեանցին մինչև փոստի առաջին կայարանը Տուլայի վրայով և ոգևորուած ձառերով ու բարեմաղթութիւններով ձանապարհ դրինք նրան . . .

Այդ միջոցին Մատթէոս կաթողիկոսի մի կողմից՝ և միաբանութեան միւս կողմից՝ ընդհարումների շրջանն էր: Այդ խառնակութեան մէջ սով պէտք է ուշ դարձնէր Վարդապետեանի վերայ:

Պատմածիցս 50 տարի յետոյ, երբ ծառայութեամբ արդէն տեղափոխուած էի Բագու, պատահմամբ իմացայ որ Վարդապետեանը էջմիածնի անհիւրասիրութիւնից յետոյ ընդ միշտ ապրում է Բագուում, իւր ծննդավայրում:

1910 թուականի գարնանն էր, որ ես գնացի այցելութեան պարոնին: «Միտրոպոլ» հիւրանոցի մի սենեակում աչքիս առաջ նստած էր 80 տարեկան մի ծերունի, անտուն, անտեղ, անգերնաստան մի մարդ, որի հետ ծանօթանալուց յետոյ, նա ամենևին դատարան չիղել իւր հրաժարականի այն հանդէսը փոստի կայարանում՝ որ յիշեցի վերևը: Վարդապետեանը մեռաւ 1911 թուի յուլիսի 31—ին:

Յիսնական թուականների յիշատակածս ուսանողներից դժուար թէ մինը կենդանի մնացած լինի: Այսպէս էր այն ժամանակի ոգևորութիւնը: Դառնամ կրկին վաթսուական թուականներին:

Այդ շրջանում Ռուսաստանի համալսարանական քաղաքներից ոչ մի տեղ այնքան հայ ուսանողների չէին խմբուած ու կազմակերպուած, ինչպէս Մոսկուայում:

Ո՞րք էին այդ ժամանակի ուսանողները: Որքան յիշում եմ, մեծամասնութիւնը Քիֆլիզցի էր: Եւանգուլեան Գէորգ, Տէր Միքայէլեան Իսահակ, Քիշմիրեան Ալեքսանդր, Երեցփոխեանց Աբրահամ, Ալադաթեան Նիկողայոս, Ղամբարեան Պօղոս, Միանսարեան Արշակ, Գուրգէնբէգեան Պլատոն, Մամիկոնեան Մատթէոս, Հէջուրեան Գարրիէլ, Փուղինեան, Շահիկեան Վասիլ, Գորեցի—Սահեփանէ Ստեփան, Արիմցի Յոհաննիսեան, Երեանցի Ջալալեան Ռուբէն, Տէր Մարտիրոսեան Գալուստ, Լոռեցի—Քուչարեանց Գրիգոր, Ղաղախեցիք—Սիմէոնեան Մարտիրոս, Տէր Յովհաննիսեան Գարրիէլ, Շուշեցի—Սթարեգեան Մովսէս, Հախումեանց, Աղլացրի—Քանանեան Քրիստափոր, և այլն:

Եւ դիտմամբ յիշատակեցի այս անունները, որպէս զի ընթերցողները, որոնք անշուշտ ճանաչում են այս պարոններին ինքեանք զատեն թէ սրանցից որոնք ինչ ծառայութիցն են ցոյց տուել իւրեանց շրջապատող հասարակութիւններին:

Գիտենք, որ Գէորգ Եւանգուլեանցը հասարակաց և դպրոցական գործիչ էր և Քիֆլիզի քաղաքապետը, Ալեքսանդր Քիշմիշեանը դպրոցական և լրագրական գործիչ, գրաքննիչ, խմբագիր, Աբրահամ Երեցփոխեան՝ բարեխիղճ դատաւոր, Պօղոս Ղամբարեան և Մատթէոս Մամիկոնեան յայտնի գործիչներ բանկային ասպարիզում, Փուղինեան՝ բժիշկ և «Դալլալ Աղօր» հեղինակ Ստեփաննոս Ստեփանէ՝ յայտնի գործիչ դպրոցական և գրակաշնական ասպարիզում, իբրև Պորէն եպիսկոպոս՝ հասարակաց գործիչ և ազգու քորոզիչ, Ռուբէն Ջալալեանց՝ փաստաբան և հասարակաց գործիչ, Գրիգոր Քուչարեանց բժիշկ և հասարակաց գործիչ, Մարտիրոս Սիմոնեանց՝ գործիչ գրականական և ուսուցչական ասպարիզում են ևն:

1860 թուականի ձմեռն էր, որ մի քանի անգամ հանդիպեցի Ստեփաննոս Նազարեանցին ուսանողական ժողովում: Ուսանողներին դասախօսում էր հայկական գրականութիւնից, բայց ուսանողները անպատրաստ լինելով այդ ատորկայից՝ այնքան ուշադիր չէին Նազարեանցին, սա էլ ամենին պահանջող չէր: 1—2 ամսից յետոյ Նազարեանցը թողեց այդ դասախօսութիւնը և հայ ուսանողների ժողովը: Չեմ կարող ասմ բացատրել Նազարեանցի այդ երևալու և կամ հեռանալու պատճառը, սակայն ենթադրում եմ, որ Նազարեանցը առաջ էլ դասախօսում էր կովկասեան կոմիտէի հովանաւորութեան տակ եղող ուսանողներին,

երբ սրանք ապրում էին միասին: Եւ երբ կոմիտէաը լաւ համարեց ուսանողներին սոճիկ նշանակել և ազատել հսկողութիւնից, այն ժամանակ նրանք կազմեցին ժողով և Նազարեանցը կոմիտէի կողմից հրաւիրուած էր դասախօսելու ու քիչ յետոյ դասարանացրած:

Սոյնպիսի յարաբերութիւն ունէր և մազիստրոս Մսեր Մսերեանցը, որ այդ ժամանակ կրօնի դասատու էր Լազարեանց ձեմարանում: Նա Զմիւռնացի էր:

Կրօնագիտութեան դասագիրքը յօրինելու համար և իբրև քաջ հայկաբան նա Մատթէոս-կաթուղիկոսից ստացել էր «Մագիստրոս» կոչումը և այդպէս էլ ստորագրում էր:

Սա մի նւհար, միջին հասակի, մօտ 50 տարեկան, բարակ ձայնով, հանդարտախօս մարդ էր, կրում էր երկայն մազեր և քահանայական հագուստ: Սա և Նազարեանցը զրականական հակառակորդ լինելով՝ իրար չէին յարգում, ուստի ուսանողական ժողով գալու ժամանակ հերթով էին գալի:

Մագիստրոս Մսերը ժողով այցելելու ժամանակ ուղեկից էր վերցնում միշտ իւր միակ որդի Ջարմայրին, որ այդ ժամանակ սևազանդուր մազերով, վայելուչ դէմքով՝ մօտ 24—25 ամեայ երիտասարդ էր:

Մսեր Մսերեանցը թէև ունէր տպագրած կրօնագիտութեան ձեռնարկ, բայց դասախօսում էր ուսանողներին թաղիկնակների մէջ փաթթած ձեռագիր մատեանով և շատ տարբական կերպով: Ուր որ կանգնում էր, այնտեղ էլ կայցնում էր մատենին երկու ցուցամատերը:

Նազարեանցի հետ միաժամանակ հեռացաւ և Մսերեանցը: Ուսանողները ոչ մի յարաբերութիւն չունէին Նազարեանցի և մանսուանդ Մսերեանցի հետ: Իսկ սրանք այդ միջոցին հրատարակում էին մինը «Հիւսիսափայլ», միւսը—«Ճոռաքաղ»: Ուրեմն երիտասարդ ուժերը այդ խմբագրութիւնների հետ որ և է շփուեմն պետք է ունենային, որ իրօք չկար:

Ուսանողների մեծամասնութիւնը չզիտէր հայերէն խօսել, ուր մնաց գրել և ուրեմն սակաւ մի պատրաստութիւն չունենալով չէին կարող փորձել իւրեանց ուժերը:

Բայց դրանց շարքերում կային ոմանք, որ ներսիսեան գպրոցում կամ Լազարեան ձեմարանում սովորած, կարող էին հայերէն գրիչ առնել ձեռքը: Առաջիններից Ստեփաննոս Ստեփանէ, Մարտիրոս Սիմոնեանց և Գարրիէլ Տէր Յովհաննիսեանց. իսկ երկրորդից էին Մանուկ Մաղաթեան, Ամբատ Շահաղիզ և Ռուբէն Ջալալեանց: Սրանք էլ հէնց մօտեցան Նազարեանցի խմբագրութեան և փորձեցին իւրեանց ուժերը:

Այս փոքրիկ խմբակի մէջ պատուաւոր տեղ էր բռնում Սաղաթեանը, նախկին սան Լազարեանց ճեմարանի, Երեւանցի երիտասարդ, որ թարգմանիչ էր Լերմոնտովի «Իէմոն» վէպը: Քանքարաւոր թարգմանութիւնը չէր կարող շարունակուել, որովհետեւ մաշող թոքախտը վերջ էր վերջոյ հարկադրեց շնորհալի բանաստեղծին դէն ձգել իւր քանքարը և տեղափոխուել հայրենիք, որպէսզի շուտ վերջ դնէր իւր կեանքին:

Սաղաթեանի հետ զուգընթաց աշխատում էր նրա հայրենակից Ռուբէն Զալալեանը: Լազարեան ճեմարանի նախկին սան, Մոսկուայի համալսարանի ուսանող, Մկրտիչ Սանասարեանի որդեգիր Զալալեանը նոյնպէս յաջող կերպով թարգմանում էր Լերմոնտովից մանր ոտանաւորներ, օրինակ «Պալեստինէի ոստը» ևն.:

Զալալեանը շուտով տեղափոխուեց Մոսկուայից Պետերբուրգ, ուր մասնակցում էր Կարապետ Եղեանի խմբին: Պետերբուրգում նա այլևս չկամեցաւ շարունակել իւր բանաստեղծական շնորհը և համալսարանի արևելեան ֆակուլտէան աւարտելով հաստատուեց ընդ միշտ Երեւանում, ուր պարապում էր փաստաբանութեամբ և մասամբ էլ վարում էր էջմիածնի իրաւաբանական դործերը: Մոսկուայից յետոյ նա այլ ևս չվերադարձաւ հայ գրականութեան ասպարէզը և մեռաւ Երեւանում:

Ստեփաննոս Ստեփանեանց, ապա Ստեփանեան և վերջը Ստեփանէ, ամենին յայտնի է իբրև Պորէն եպիսկոպոս, ճարտար քարոզիչ, դպրոցական գործող, Պորենայու թարգմանիչ ևն «Հիւսիսափայլ»-ին տուել է շատ ոտանաւորներ Իշխան Բագրատունի ստորագրութեամբ: Մաստիկ գովաբանում էր Նալբանդեանի «Կոմս Էմմանուէլի» յիշատակարանները, բայց ուսանող ժամանակ հետու էր պահում իւրեան Նազարեանից:

Ուսանող ժամանակն ապրում էր սա իւր մեծ եղբոր տանը, որ յայտնի աւետարական էր Մոսկուայում և նշանաւոր էր իւր հիւրասիրութեամբ: Թաթախման երեկոներին հրաւիրուում էին նրա առաա սեղանին անխոր բոլոր հայ ուսանողները ծանօթ և անծանօթ, ունեւոր և չունեւոր:

Ուսանող Ստեփանէն ձգտում ունէր հայկաբանութիւն սովորելու և մանաւանդ բանաստեղծական ասպարիզում: Բացի այն, որ կարգում էր ժողովում, Ստեփանէն հայագէտ ուսանողներին հրաւիրում էր իւր բնակարանը և կարգում էր Իշխան Բագրատունու բանաստեղծութիւնները:

Ուսանող Ստեփանէն շատ սիրում էր պարել, անդադար յաճախում էր մեծ թատրոնի օպերա և բալէտ և առաջնակարգ իերանհանորդսելին բարձրաձայն դուրս կանչել և ծափահարել և

այդ պատճառից ստիպուած կորցնում էր ձայնը. ուսանողական ներկայացումների ժամանակ նա մեծ ժրութեամբ աշխատում էր գործը գլուխ բերելու:

Սիրում էր առաջնակարգ դեր խաղալ և իւր առաջ մի չնչին իտընդոտ տեմսելով՝ անտեղի վիճաբանութիւն սարքում և բանը կուռի հասցնում . . . իւր հեղինակութիւնը բարձր պահելու նպատակով:

Աչքի առաջ ունենալով նրա բնաւորութեան շատ գծեր, ոչ ոք իւր ընկերներից այն ժամանակ չէր վստահանալ զուշակել, որ այդ ուսանողը իւրեան պատրաստում է կուսակրօնութեան . . .

Սմբատ Շահազիզ, Երեւանի նահանգի Աշտարակի գիւղից, Լազարեանց ճեմարանի սան, աւարտեց ճեմարանի լիցէոնը և ընդմիջտ մնաց Մոսկուայում իբրև ուսուցիչ յիշեալ ճեմարանում: Նրա մանր ու խոշոր բանաստեղծութիւնները «Լեոնի վիշտ» վէպը, «Հրապարակախօս ձայն» գիրքը և ուրիշ աշխատութիւններ ամենին յայտնի են: Իւր երիտասարդ օրերում ունէր պճնասիրութիւն. խիստ հակող էր իւր հազուստի, դէմքի շարժման վայելութեան վրայ ևն: Շատ մօտ բարեկամ էր Նազարեանցին:

II

Մարտիրոս Սիմոնեանց. Գաբրիէլ Տ. Յոսեփեանց. Անանիա Սուլբ. Ա-Շահ. Յոնանեկս Քարաճեանց և Յոնանեկս Պիտանեանց.

Մարտիրոս Սիմոնեանց Ղազախի Քարվախսաբա գիւղից, պատանի հասակից սովորում էր Քիֆլիզ Ներսիսեան դպրոցում: 1858 թուին գեղարուեստ Յոնանէս Քաթանեանցը վերակացու էր Ներսէսեան դպրոցում և հետեալ տարին նա ուսուցչութեամբ տեղափոխուեց Ստաւրոպոլի գիմնազիան: Սա իւր հետ տարաւ և Մարտիրոս Սիմոնեանցին, որ այնտեղ աւարտեց գիմնազիան ու 1861 թուին մտաւ Մոսկուայի համալսարանի մատեմատիքական ֆակուլտէտը: Յոնանէս Քաթանեանի շնորհիւ ուսանող Սիմոնեանցի սնունդը վերցրեց իւր վերայ Մոսկուայի հարուստ Յոնանէս Ստեփանեան Անանիանցը:

Մոսկուայում ուսանող ժամանակ Մ. Սիմոնեանցը տուել է Հիւսիսափայլին երկու յօդուած: Առաջինը թարգմանութիւն է առեւերէնից իւր ժամանակի Իտալական ազատութեան հերոս Ջուզէպէ Գարիբալդի կենսագրութիւնը «Գարիբալդու կեանքը» Մարտիրոս Հրաչեայ ստորագրութեամբ:

Միւս յօդուածն է պատասխան կռունկ ամսագրի մէջ տպագրուած Գարեգին Մուրադեանցին (ապա Մեկքիսէզէկ արքեպիսկոպոս) իբրև Թիֆլիզից գրուած Յակոբ Ալիշանեան ստորագրութեամբ 1861 թուին, «Մի քանի խօսք Մուրադեանցի նկատմունքի վերայ» խորագրով: (Ապրիլ 1861.)

Ահա մի գաղտնիք, որ բացուած է 55 տարի յետոյ: Չկամենալով վիրաւորիլ իւր մօտ բարեկամ և ընկերակից Գարեգին Մուրադեանցին, Մարտիրոս Միմոնեանցը հարկադրուեց թագնուել Յակոբ Ալիշանեանի անուան տակ: Դա անհերքելի փաստ է:

Ուստի, պ. Լէօն Ստեփաննոս Նաղարեանցի կենսագրութեան երկրորդ հատորի 138 երեսի ծանօթութեան մէջ կատարեալ իրաւունք ունէր երկրայելու, որ Յակոբ Ալիշանեանը մտացածին անուն է: Բայց կենսագիրը ճիշտ տեղեկութիւն չունենալով, պատասխանը վերադրում է Նաղարեանցին:

1862 թուին, Պետերբուրգում, Կարապետ Եղեանը ունէր մասնաւոր դպրոց պիշերօթիկ աշակերտների, որոնց հայերէն գասաւանդելու համար նրաւիրուեց Միմոնեանցը:

Այդ միջոցում պ. Եղեանի դպրոցում, ինչպէս երևում է Միմոնեանցի 1862 թուականի սեպտեմբերին ինձ դրած նամակից, ուսանում էին 10 աշակերտ, որոնք են

- Լևոն Տիգրանեանց Երևանցի,
- Մեհրուժան . . . } Խալաթեանք,
- Արշակ . . . }
- Գրիգոր Բուզաղեանց,
- Մկրտիչ . . . } Էդիլիսանեանք Հաշտարեանցի,
- Կարապետ . . . }
- Մելքոն Մամաջանեանց Արզարցի,
- Ալէքսանդր Շանշիեանց Թիֆլիզցի,
- Արզար Յոհաննիսեան Թիֆլիզցի,
- և Ստեփան Զարաֆեանց հայ կաթուր. Թիֆլիզցի.

Եղեանի դպրոցը և իւր բնակարանը մի յարկե տակ էին և յաճախ պատահում էին այդտեղ ուսանողական ժողովներ մասնակցութեամբ նաև ոչ ուսանողների: Ժողովն ունէր Մոսկվայի ուսանողական ժողովների բնոյթը, այն է խօսել հայերէն, սովորել զբաղանութիւն, սովորել հայերէն գրել . . . և այդ նպատակով կարգում էին յօդուածներ, բէֆերամներ, անում էին վիճարանութիւններ, որ տաքանալու միջոցին փոխուում էր ուսեօրէնի, ինչպէս ինում էր և Մոսկվայում:

Երկու անգամ հանդիպել եմ ես այդ ժողովներին, ուր տեսել եմ, բացի ուսանողներից, Եղեանին, Յովսէփ Իզմիրեանին, Միքայել Միանսարեանին, Գէորգ Դողոսեանին. և այլոց:

Անցեալ 1911 թուականին Ղազարոս Աղայեանի մահուան առիթով, բժ. Աւետիք Բարայեանը, որ վաթսուեական թուականներում ուսանող էր Պետերբուրգում, ուրեմն և մասնակցում էր Եղեանի ժողովներում, խոստացաւ գրել իւր յիշողութիւնն Աղայեանցի այդ ժողովներին մասնակցելու մասին, բայց չկարողացաւ իրագործել իւր խոստումը իւր մահուան պատճառով:

Միմոնեանը այդ ժամանակ ուսանող էր Պետերբուրգի համալսարանի և մասնակցում էր նոյնպէս այդ ժողովներին: Բայց նա ի բնէ ունէր թոյլ կազմուածք և բարակացաւ բուն էր դրել նորա թոքերի մէջ, և երբեմն էլ երեցնում էր արեան հեռքեր Միմոնեանցի թուքի մէջ հազալու ժամանակ: Ուստի Միմոնեանցը հարկադրուած եղաւ ձգել համալսարանը և Պետերբուրգը ու վերադառնալ Կովկաս:

Թիֆլիզում նա ուսուցչութիւն սկսեց անել Ներսիսեան դպրոցում և ջերմ մասնակցութիւն ունեցաւ Պետրոս Միմոնեանցի Մեղուի մէջ: Մի փոքր միջոց էլ ուսուցչութիւն արաւ Էջմիածնի Ճեմարանում, բայց թոքախտը իւր գործը արագութեամբ յառաջ էր տանում:

Մարտիրոս Միմոնեանցը, որը թողնելով իւր ամուսնուն ու դեռահաս աղջկանը, մեռաւ իւր հայրենի Քարվանսարա գիւղում 1882 թուի Մարտի 29-ին և թաղուեց այն տեղ հասարակաց գերեզմանատանը:

Հետաքրքիր այցելուն այսօր կտեսնի գիւղական գերեզմանատան մէջ մի բարակ տափակ շիրմաքար, որ իւր վերայ կրում է հետեեալ արձանագրութիւնը:

«Մարտիրոս Ղուկասեան Միմոնեանց, ուսուցիչ Ս. Էջմիածնայ Ճեմարանի և Տիֆլիսի Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի: Վախճանեցաւ 1882 թ. Մարտի 29-ին 44 ամաց հասակում»:

Միմոնեանցի բազմաթիւ ապերախտ ազգականները, որ պարտական են նորան թէ զբամական օգնութեամբ, թէ ուսումնառութեամբ և թէ բարոյական հոգատարութեամբ, հազիւ կարողացել են բաժին հանել հանգուցեալին այս անշուք տապանաքարը:

Գարրիել Տէր Յոհաննիսեանց, Ղազարի գաւառի Ուզունթալա գիւղից, (Ազատե վեաի աջ ափից ոչ հեռու) պատանի հասակում, աղքատ զրութեամբ ուսանում էր Թիֆլիզում Ներսիսեան դպրոցում: Հասնելով դպրոցի չորրորդ վերջին դասարանը, նա 1858 թուականի աշնանը ուղարկուեց Մոսկվա ուսանելու, պատրաստուելու և համալսարան մտնելու քննութեամբ:

«Ուղարկուեց» ասում եմ այն նպատակով, որ այդ պատանին իւր աղքատ և անգամ հացի կարօտ զրութեամբ՝ երբէք չէր կարող մտքով անցկացնել թէ ճակատագիրը բացել է նորան ճա-

նապարհ դէպի Մոսկվայի համալսարանը. Սակայն այդ իրողութենի էր:

Այս բանի նախաձեռնողն ու ի կատար անողն էր գեղարուեստագէտ Յոհաննէս Քաթանեանցը, որ վարում էր այդ միջոցին Ներսիսեան դպրոցում վերակադուի պաշտօն:

Քաթանեանցը կարողանում էր աղքատ աշակերտներին ուսման ասպարէզ բանալ բարերար և բարեգործ մարդկանց ձեռքով: Առանց աշակերտ Տէր Յոհաննիսեանցի դիտութեան՝ Յոհաննէս Քաթանեանցն արդէն պտարաստել էր մի Ղզլարցի պարոնի բարեհաճ կամքը, որ յանձն էր առել ուղարկել այդ աշակերտին Մոսկվայ ուսանելու բժշկութիւն: Եւ ինչի՞ անպատճառ բժշկութիւն:

Այդ բարի մարդն էր Ղզլարցի և Ղզլարում վաճառական Յոհաննէս Եսայեան Պիտանեանցը, որ իւր տոկունութեամբ և ազնիւ ճանապարհով աղքատ դրութիւնից բարձրացել էր որոշ նիւթական ապահովութեան, բայց մտահան չէր արել ոչ իւր անցեալը և ոչ աղքատ դասակարգի դրութիւնը: Ուստի նա ցանկանում էր որդեգրել մի երիտասարդ, որը բժիշկ դասնալով՝ օգտակար լինէր աղքատ դասակարգին: Այդ նպատակի համար, չգիտեմ ինչ հիմունքներով, Յոհաննէս Քաթանեանցի ընտրութիւնը կանգ առաւ աշակերտ Դաբրիէլ Տէր Յոհաննէսեանցի վերայ:

Յոհաննէս Պիտանեանցը լոկ վաճառական էր, ծախում էր ձողայի պարանքներ և դեռ ևս վաթսուռական թուականներին Ղզլարում միակ վաճառականն էր, որի խանութում ապրանքի գինը ամփոփոխ մի խօսք էր. Ուստի ամէնքն էլ վստահ էին, որ Պիտանեանցի խանութում թագաւորում է մի խօսք, չկայ չարչիութիւն: Վրանարձակ եղալ ազգն անգամ լաւ ճանաչում էր նրան և անուանում էր նրան «Իքի այթմաղ» այսինքն երկու չի ասիլ: Պիտանեանցը մեռաւ թուին բայց Ղզլարը նորան դեռ ևս երկար կյիշի:

Այս տողերից երևում է, որ բժիշկ Դաբրիէլ Տէր Յոհաննիսեանցը իւր կրթութեամբ, իւր բարօրութեամբ և ներկայ դրութեամբ լիովին հրախտապարտ է նախ հանդուցեալ Յոհաննէս Քաթանեանցին և ապա միւս հանդուցեալ Յոհաննէս Պիտանեանցին:

1859 թուականի աշնանը Տէր Յոհաննիսեանցը արդէն ընդունուած էր ուսանող բժշկական ֆակուլտետի 22 տարեկան հասակում և հետեւալ տարին ուսանողական ժողովի միջոցով ծառայութեամբ Ստեփաննոս Նազարեանցի հետ, իսկ 1861 նորա անդրանիկ աշխատութիւնը «Տէր Սարգիս» խորագրով լոյս տեսաւ Հրատարակչի մէջ:

Գուցէ հետաքրքրական լինի, թէ ինչի նա իւր վէպը սկսեց ուղղակի հոգեորականութիւնից: Սորա պատճառն այն է, որ նա հէնց մանուկ հասակից, գիւղական շրջանում, տեսել է այն, ինչ որ և նկարագրել է:

Ներսէս կաթողիկոսի օրով Ղազախի գիւղական աղքատ ու ազէտ և մեծ մասամբ անգրագէտ քահանաներն ան ու սարսափի տակ էին լինում գործակալների ձեռքից:

Յայտնի է որ Ներսէս կաթողիկոսը գիւղերում հոգևոր տեսչութիւնը վարդապետներուց վերցնելով յանձնել էր աշխարհականների և այնպիսի աշխարհականների, որոնք զուրս եկած կամ զուրս արուած, խեղճ ժողովրդին կեղեքող, անպաշտօն չինտփսիկներ էին: Օրինակ ինձ յայտնի է, որ Նոր Բայազէտի գաւառում Սիրական աղա Գորոյեանց, իսկ Ղազախ և Շամշաղիսու գաւառներում էր Սարգիս աղա Վարչամեանց: Բոլորն ալլա տիտղոսով...

Պատանի ժամանակից յիշում եմ և այժմ, որ Վարչամեանցը դործակալ էր յիսնական թուականներում Ղազախի և Շամշաղիսու գաւառներում: Նա Ղազախի Սև քար անուն գիւղիցն էր և հէնց այն տեղ էլ բնակւում էր: Բարձրահասակ, լղար, մօտ 50—55 տարեկան, ողնաշարը զուրս ընկած մի մարդ էր, որ խօսում էր ցածր ձայնով ու լալկանի նման: Ունէր միլիցիայի պրապօրչիկի չին և այդ փոքրիկ չինը տալիս էր Վարչամեանցին այնպիսի մի նշանակութիւն այն ժամանակի գիւղական ժողովրդի աչքում, որ այդ մարդը կարող էր սարսափ ազդել, իսկ քահանայք... ոհ. նրանք գիտէին, որ Վարչամեանցից դէնը աստիճան չկայ, ուղղակի խրոխտ Ներսէս կաթողիկոսի աթոռն է, որ ամիսներով կպահէր իւր մօտ դէն ձգած քահանային առանց նրա երեսը տեսնելու կամ աղերսանքը լսելու:

Վարչամեանցը պաշտօնական թղթերում ոտորագրում էր «Վերատեսուչ աղա Սարգիս Վարչամեանց»։ Նա հազնում էր սպիտակ կոճակներով սերթուկ, ուս ընդ անութ կրում էր թուր, որից կախուած էր, ըստ սովորութեան փնջիկ (темляк) և ասում էին թէ չինը այդ փնջիկն է: Վրան ծածկում էր կարմիր օձիքով մոխրագոյն մահուգէ լայն վերարկու (шубель) ու պտտում էր գիւղերը կապույտ ձիով կամ միայնակ կամ իւր գրագրի հետ, որ նոյնպէս մեծ ազդեցութիւն ունէր քահանաների վերայ:

Քահանայք՝ երբ ներկայանում էին Վարչամեանցին, չէին վստահանում նստել, այլ գլխարաց շարքով կանգնում էին նրա հրամաններն ընդունելու: Վարչամեանը ինքնիշխան պատիժներ էր նշանակում քահանաներին, արդիւում էր փիլոն ծածկել, ար-

գելում էր ժամասացութիւն անել. հրամայում էր քահանային պատարագի ժամանակ կանգնել եկեղեցու դրան մօտ, ժողովրդի ներկայութեամբ և սաղմոս քաղել, զրկում էր հասոյթից ևն ևն:

Վարչամեանցը սիրում էր յանկարծաւոր մտնել այս կամ այն գիւղի եկեղեցին, որ մի բան նկատելով պատժի քահանային: Շամաղիխու մի գիւղում պատարագիչ քահանան «խաղաղութիւն ամենեցուն» ասելու ժամանակ յանկարծ տեսնում է Վարչամեանցին եկեղեցու մէջ կանգնած և այնպէս է սարսափահար լինում, որ պատարագը թողնում՝ փախչում է եկեղեցուց: Սև քարի Յակոբ քահանան կիրակի օր գնում է սայլով փուշ բերելու և Վարչամեանին յանկարծ պատահելով..... ահից թաղնուում է փշի կոյտի տակ:

Ահա կեանքի այն պատկերները որ տպւորուած էին «Տէր Սարգիս» վէպի հեղինակի երևակայութեան մէջ, ահա պատճառը թէ ինչի նա սկսեց իւր վէպը ուղղակի Տէր Սարգսից:

Այս տողերից յետոյ, կարծում եմ, որ Նազարեանցի կենսագրութեան հեղինակ քրտնաջան Լէօն չի մեղադրել «Տէր Սարգսի» հեղինակին թէ «Նա տողորված է Հիւսիսափայլի ոգով, խիստ աչք ծակող, խիստ խայտառակ գոյներով են մերկայրուած հոգևորականութեան պակասութիւնները».*

Ի՞նչ է պատճառը որ «Տէր Սարգիս» վէպը ընդհատուեց, չշարունակուեց: Վէպը երբ հասել էր այն կէտին, որ պէտք է բեմ հանուէր թիֆլիզի իւր ժամանակի նշանաւոր քահանաներից մինի — Սահակ աւագ քահանայ Սահառունի—կրօնի դասատուութեան խայտառակ ձևը ներսէսեան դպրոցի բարձր դասատունում, հեղինակին հաղորդել էր Սահառունու աշակերտ Մարտիրոս Սիմոնեանցը: Իհնց այդ ժամանակ բորբոքուած էր Մատթէոս կաթողիկոսի կողմից հալածանք Նազարեանցի դէմ, ուստի ցենզոր Էրոյեանցը արգելք դրեց վէպի շարունակութեանը:

Առանց վէպին որ և է քննա հասցնելու հեղինակը կարող էր դէն ձգել Սահառունուն էլ նրա դասատուութիւնն էլ և հանգիստ շարունակել վէպը, բայց նա անփորձութիւնից դիմեց զանազան միջնորդների ու անյաջողութեան հանդիպելով, դիմեց կարապետ Եղեանի միջնորդութեանը, որը 1862 թ. Մայիսի 15-ից նամակով պատասխանեց, թէ Բերոյեանցին անկարելի է համոզել, որ նրան—Բերոյեանցին, հրամայուած է ցենզուրական կօմիտէի կողմից, որ հայոց հոգևորականութեան մասին ոչ մի յօդուած թոյլ չտայ տպագրութեան: Աւելացրէք սրա վերայ և այն, որ շուտով դատարանից Հիւսիսափայլը:

Ահա այսպիսի փորձանքի ենթարկուեց «Տէր Սարգիսը», որի շարունակութիւնը մնում է անշուք մինչև այսօր:

Ստեփ. Նազարեանցի կենսագրութեան մէջ պ. Լէօն ափսոսում է, որ Տէր Սարգսի հեղինակը չէ փորձել շարունակել այսպիսի գրուածքներ, այլ գրել է ճանապարհորդական նկատողութիւններ ժողովրդի կացութեան և հնութիւնների մասին: *

Սիրով ընդունելով պ. Լէօնի այս նկատողութիւնը՝ պարտք եմ համարում բացատրել, որ Տէր Սարգսի հեղինակը չէ գոհացել միայն յիշեալ վէպով, այլ դեռ ևս ուսանող ժամանակը նա գրել է երկու վէպ ևս, մինը 1863 թուին «Ջուխտ անիծեալ գերեզման» որ Նազարեանցի ոճով գրուելու պատճառով և յետագայ իւր հայացքին տեղ առ տեղ անհամաձայն գտնելով՝ մնացել է անտիպ մինչև այսօր. իսկ միւս վէպիկը «Սուրբ Գեորգի դուլը» գրուած է 1864 թ. և տպուած է Պետրոս Սիմոնեանցի Մեղու Հայաստանի մէջ. **

Ապա թէ ի՞նչ է պատճառը, որ Գ. Տէր Յոհաննիսեանցը վիպագրութիւնը թողել է և անցել է հնութիւններին և ժողովրդագրութեան: Ահա դրա բացատրութիւնը.

Բժիշկը 1867 թուականից մինչև 1898 թուի վերջը միշտ վաբել է գաւառական բժշկի պաշտօն, մի պաշտօն, որ շարունակ շարժման մէջ է, որ չունի ոչ հանգիստ և ոչ դադար: Ուրեմն վէպի համար նա չէր կարող ունենալ միջոց և ժամանակ:

Բայց սոյն այս բժիշկը օրերով և շաբաթներով լինելով ծառայական անդադար շրջագայութեան մէջ, նա իւր ճանապարհին հանդիպում էր սարերի, ձորերի, գետերի, անտառների, դաշտերի, գիւղերի ժողովուրդներին, հին վանքերի, եկեղեցիների, ամրոցների, դերեզմանների և այլ և այլն, որոնցով նա չէր կարող չթափառել, չէր կարող աչքերը խփել և անցնել, ինչպէս արել են տակուել, չէր կարող աչքերը խփել և անցնել, ինչպէս արել են նորա պէս շատ շատ ծառայողներ: Բայց նա իւր այդ բոլոր տեսածները գնում էր, քննում էր, նիւթեր էր ժողովում, գրել էր անցնում իւր ծոցատետրերի մէջ, որ դժուար չէր իրագործել այդ բոլորը:

Ուրեմն ազատ ժամանակ չունենալով վէպեր գրելու բժ. Տէր Յոհաննիսեանցը չէր կամենում ու չի կամեցել երբէք ձեռքերը ծալել և աչքերը խփել, այլ նա ուր որ եղել է, ուր որ ծառայել է, որ նահանգում կամ գաւառում էլ որ շրջագայել է, ամենայն տեղ հաւաքել է բազմատեսակ և բազմաքանակ նիւթեր, իբրև պտուղ

* Լէօ Ստեփ. Նազարեանց հատ Բ. երես 264 եւ 265. Զիւ № 149: ** Մեղու Հայաստանի 1872 թ. № 21 եւ 23 (օգոս. 12 եւ 19):



✓

իւր ճանապարհորդութեան և մշակելով այդ նիւթերը տուել է գրականութեան շատ և շատ աշխատութիւններ, որոնց քանակը, չհաշուած անթիւ լրագրակոն նամակները, այժմ անցնում է 66 աշխատութիւնից աւելի թէ հայերէն և թէ սուսերէն լեզուներով: Նա աշխատակցել է Հիւսիսափայլին, Մեղու Հայաստանիին (Պետ. Սիմոնեանցի), Փորձին, Արձազանքին, Ազգագրական Հանգիսին, Լուսային, Արարտաին, Նոր-Գարին, Ռուսական հրատարակութիւնների, որք են Кавказъ, Протоколы Имперот. Кавк. Мед. Об-ва, Труды первого Съезда Кавк. врачей, Кавказское Сельское Хозяйство, Труды Об-ва врачей Гор. Баку, Свѣдѣнія Медико Санит. Бюро города Баку, Газета «Баку» և ուրիշները:

Բայց սրանով բանը չէ վերջանում, դեռ ևս այնքան ժողոված նիւթեր են մնացել հում գրութեամբ, որ նրանց մշակելուն հարկաւոր է այլ ևս մի կեանք...

Վերջին խօսքերս միջանկեալ հանգամանք էր, որով կամեցայ գոծացում աւլ մեր յարգելի անխոնջ մշակ Լէօի հարցապնդմանը:

Բժիշկ Անանիա Սուլթանշահ, Նոր Նախիջևանցի, Նալբանդիանցի ընկեր, յիսնական թուականների ուսանող, երբէք չէ մասնակցած վախճանական թուականների ուսանողական ժողովներին:

Մի անգամ ընդմիջտ Հիւսիսափայլին (1859 հոկտեմբեր) տուել է մի թատերադրական ձևով գրուած յօդուած «Հայոց ազգի Լուսաւորիչը» որի մէջ նկարագրում էր Սալիբեան ուսումնարանի ներքին կեանքը Գարրիէլ վարդապետ Այվազեանի ղեկավարութեան օրով: Աշխատութեան մէջ դուրս են բերուած նաև այնպիսի անձնաւորութիւններ, որոնք հաճելի չէին հեղինակին և ոչ մի աղբնջութիւն չունէին յիշեալ դպրոցի հետ, ընդհանրապէս գրուածը սուր էր, բայց զերծ չէր անձնականութիւնից: Սորա հակառակինքը, Սուլթանշահը, հաւատացնում է, որ «մաքուր խղճմամբով առնուած է բուն ազգի անգամներից:

Նրա գործող անձանց շարքում բէմ է հանուած «Մագամեան» կեղծ անուան տակ մի անձնաւորութիւն, որ մեծ յարգանք էր վայելում Մոսկվայի հայութեան և հայ ուսանողութեան մէջ, երկար տարիներ վարել է Լազարեան ձեմարանի կրթական ղեկը, անձնական բարեկամ էր Նազարեանցին, վերջինս նրա շնորհիւ երկրորդ անգամ հրաւիրուեց Թիֆլիզից Լազարեանց ձեմարան ու վերջապէս նիւթապէս ապահովացրել է մի դպրոց Պարսկաստանում: Եւ այս անձնաւորութիւնը Սուլթանշահի Մագամեանն է:

Այս ազգանունը յօրինած է «մագամ» բառից, որ նշանակում է «միթէ» և գործ է ածուած Լըզլարի հայերի մէջ. օրինակ, մագամ չէս տեսել, մագամ ցուրտ է. Լն և յիշեալ անձնաւորութիւնը, իրը Լըզլարցի, նախկին ժամանակում նոյնպէս գործ էր ածուած «մագամ» բառը:

Միամիտ Նազարեանցը երբէք մտքովը չէր կարող անցկացնել թէ Սուլթանշահը թնջ նուէր է մատուցել Հիւսիսափայլի խմբազրին: Դորանից յետոյ Սուլթանշահը այլ ևս չէ մասնակցած հայ գրականութեան: Դորա փոխարէն նա բժշկութեամբ էր պարպում Մոսկվայի հայերի շրջանում ու նոյն նպատակով գնում էր Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը, որով մօտենալով Լըզլարցի վաճառականներին, տեղափոխուեց վերջինների մօտ, Լըզլար, մասամբ պարպում էր այգեգործութեամբ և գործիչ իր դպրոցական ասպարէզում:

Նա մեռաւ Լըզլարում: Ուրախալի է, որ անկողմնապահ Լէօն ընդունում է, որ Սուլթանշահի գրուածը ունի պատկվիլական բնաւորութիւն:

Սորանով վերջացնում եմ Հիւսիսափայլի այն աշխատակիցների ցուցակը, որոնք ուսանողական դասակարգից էին և Մոսկվա լինելով, անմիջապէս յարաբերութիւն ունէին խմբագրութեան հետ: Սորանից յետոյ ես դիմում եմ այն հարցին, թէ Հիւսիսահայլը թնջ ընդունելութիւն էր գտել հէնց լոյս տեսնելու օրից հովկասի մայրաքաղաք Թիֆլիզում, հայկական մտաւորական կեդրոնում:

Իւր տեղը մոռացայ յիշատակել, որ Հիւսիսափայլի աշխատակիցները ոչինչ վարձատրութիւն չէին ստանում: Միայն Ռաֆայէլ Պատկանեանը (Միքայէլ Վայելչեան), որ ապրում էր սուղ միջոցներով Պատերրուրգում, իւր աշխատութեան համար պահանջում էր վարձ, ինձ անյայտ որքանութեամբ:

1389-51



III

Յուզմունք ներսիսեան դպրոցում «Հիւսիսափայլի» պատճառով: Ալեքսանդր Քայրեան եւ բնկերները. Ասա- կերտների Կալանաւորում եւ գամակոծումը. Սարգիս արե- եպիսկոպոս Ջալալեանց. Քայրեանցը Մոսկվայում. Ջալալեան արեպիսկոպոսի յայտարարութիւնը:

1857 թուին ներսիսեան դպրոցը դեռ ևս գետեղուած էր ներ- սէս կաթողիկոսի օրով շինած առանձնակի երկյարկանի շինու- թեան մէջ, որ այժմ վերածուած է խանութների և պանդոկների:

Այդ թուին ներսիսեան դպրոցի տեսուչն էր Պետրոս Սա- մէլեան Շանչիեանցը, որ միաժամանակ կրօնի դասախօս էր նոյն դպրոցի վերջին, բարձր IV դասատան աշակերտներին: Թեմակալ առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանցի կարգադրու- թեամբ Շանչիեանցը հեռացաւ իւր պաշտօնից և նորա տեղ հրա- տիրուեց ծեր Դաւիթ Արզանեանցը:

Նոյն և հետևեալ թուականին դպրոցի և գիշերօթիկ աշա- կերտների վերակացուն, այլ և դպրոցի մատենադարանապետն էր Երեմիա Իսահակեանց, որի փոխարէն հրաւիրուեց գեղարուեստա- գէտ Յովհաննէս Քաթանեանցը:

Իսկ անփոփոխ և լիազօր հոգաբարձուներն էին Ալէքսանդր Քայրեանց, Գէորգ Խէրողինեանց և Նազար Մանգինեանց: Երե- քից ամենաճակատով և զայում մարդն էր Ալ. Քայրեանցը, որ վարժուած էր դեռ ևս թաղական պրիստաւի պաշտօնավարութեան օրով:

Ես գիտմամբ եմ առաջ բերում առաջնորդ Ջալալեանին, Հոգաբարձու Քայրեանին, Դաւիթ Արզանեանին, որ դրանցով ցոյց տամ այդ ժամանակի ներսիսեան դպրոցի մէջ տիրող խիստ ուշտիմը: Հին սերնդից շատ շատերը կճանաչեն այս պարոններին:

Խիստ ուշտիմի տակ սովորած աշակերտները յանկարծ տես- նում են իւրեանց առաջ մի հեղաբարոյ, բարեբարոյ, մարդասէր, քաղաքավարի վերակացու, որ վարւում է աշակերտների հետ ըն- կերավարի, ուստի հոնուր աշակերտների սիրտը կաշոււ է այդ վերակացուին, մանաւանդ գիշերօթիկների սիրտը: Այդ վերակա- ցուն էր Յովհաննէս Քաթանեանցը, որ նոր էր վերադարձել Պե-

տերբուրդից: Սա զեկավարում էր, մատչելի գրքեր էր բաժանում նորանց ընթերցանութեան համար, առաջարկում էր կարգալ նաև «Հիւսիսափայլ»:

Հիւսիսափայլ... ներսիսեան դպրոցում... եպիսկոպոս Ջալալ- եանի, Քայրեանի, Արզանեանի օրով... այդ ինչ բան է, ինչ հերձուածողութիւն...

Այսքանը բաւական էր որ Քաթանեանը ճանաչուէր ուղղակի Քասակար դպրոցի շահերին, մանաւանդ որ տեսուչ Արզանեանն էլ միւս կողմից գոչում էր, թէ վերակացու Քաթանեանը աշա- կերտներին գրաւել է իւր կողմը, էլ տեսուչ չեն ճանաչում, ամեն կարգադրութիւն առանց տեսչի է լինում: Եւ այդ բոլորը Քաթա- նեանի դէմ...

Ահա այս դրութեան էր ներսիսեան դպրոցի ներքին կեանքը՝ 1858 թուին, երբ տողերիս գրողը աշնանը թողեց այդ դպրոցը և գնաց Մոսկվա: Սորանից յետոյ ինչ տեղեկութիւններ որ տամ դպրոցի մասին, այդ իմ տեսածս չէ, այլ քաղուածք է այդ ժա- մանակի աշակերտ Մարտիրոս Սիմոնեանցի ընդարձակ նամակից, որ դրել է ինձ, իբրև իւր ընկերի և հայրենակցի, և որ ես ստա- ցել եմ Մոսկվայում 1858 թուի դեկտեմբեր 21-ին և որը այսօր, իբրև պատմութեան նիւթ, երևան է հանւում 58 տարի յետոյ:

Հոգաբարձու Քայրեանը գոռում գոչում էր գիշերօթիկ հա- սակաւոր աշակերտների դէմ երես առ երես, թէ Շանչիեանցի մո- լորութեան մէջ խմորուել էք և հակառակ իմ պատուէրի, դուք ծածուկ կարդում էք նազարեանցի նոզվեալ օրագիրը: Քայրեանը շարունակում է «մի զազանից (Շանչիեանից) ազատուեցինք, ըն- կանք միւս զազանի (Քաթանեանցի) ձեռքը»:

Քաթանեանցի վերակացութեան օրերը հաշուած էին: Պատ- րաստուում էին հեռացնել այդ պարոնին, բայց քայլ առ քայլ: Առաջ վերցրին մատենադարանը, որ դրանով պակասեցնեն Քա- թանեանցի ոռճիկը, ապա ասացին թէ «դրանից Շանչիեանի հոտ է փչում». Կասկած չկար, որ այդ ամէնը կատարւում էր թեմա- կալ առաջնորդ Ջալալեանի թելադրութեամբ:

Հէնց որ Քաթանեանցի արձակման լուրը խտացաւ, աշա- կերտները միաբան օրոշեցին գնալ առաջնորդին խնդրելու: Երե- կոյեան գիշերօթիկ աշակերտները միահամուռ դիմեցին Վանքի բակը, առաջնորդարան ընդունեցին միայն ներկայացուցիչներին. որոնք մի առ մի պատմելով Քաթանեանցի բարեմասնութիւնները, խնդրեցին թողնել նորան իւր պաշտօնի մէջ: Եպիսկոպոսը առերես յարգեց նրանց խնդիրը... և ուղարկեց Քայրեանի մօտ հաճեցնելու նորա կամքը:

Քայրեանը մի քանի ընդդիմութիւնից յետոյ իբրև թէ հա-

մաճայնեց և խոստացաւ համոզել իւր ընկերներին... և ուղարկեց
աշակերտներին տեսուչ Արզանեանցին հաճեցնելու, բայց սրանք
գեռ չդիմեցին Արզանեանցին, սպասելով երկու օր Հոգաբարձու-
ների և առաջնորդի խոստման հետեանքին:

Երբորդ օրը, երեկոյեան, Քաթանեանը մտաւ դպրոց, գիշե-
րօթիկների սովորական ազօթքից յետոյ, դարձաւ նա աշակերտ-
ներին, շատ խրատական խօսքեր արտասանեց, առաջարկեց նրանց
լինել բարի մարդիկ և հասարակութեանը օգտաւէտ և ներողու-
թիւն խնդրելով որ գուցէ այս կամ այն աշակերտին վերաւորել է
իւր պաշտօնավարութեան ժամանակ, հրաժեշտ տուաւ ու հեռա-
ցաւ դպրոցից:

Այս հրաժեշտը առաջնորդի և հոգաբարձուի հանգստացու-
ցիչ խոստումներից յետոյ բոլորովին անսպասելի էր աշակերտների
համար, ուստի յուզուեցին նրանք, տխրեցին, ոմանք լալիս էին,
հիւանդ աշակերտները իւրեանց անկողիններից դուրս թափուեցին
դահլիճ տխուր հանդիսին մասնակցելու:

Աշակերտները կորցրել էին գլուխները, շուարել էին, ապուշ
կտրել... և վերջապէս որոշեցին խմբովին դիմել տեսուչ Արզան-
եանցին, որպէս զի կատարած լինին հոգաբարձու թայրեանի
առաջարկը և դիմեցին: Արզանեանցի բնակարանը նոյն դպրոցա-
կան շինութեան մէջն էր: Արզանեանցը սովորաբար հարուստ էր
հայհոյական բառերով:

Տեսուչը այս անգամ էլ հաւատարիմ մնալով իւր բնաւորու-
թեան, արժանավայել հայհոյանքներով ընդունեց բոլորքուած
աշակերտներին, զայրացրեց նրանց սիրտը և տեղիք տուեց նրանց
խկոյն և եթ բողբոջներով թափուելու առաջնորդարան: Այնքան
յուզուած և բորբոքուած էին այս անգամ աշակերտները Արզան-
եանցի դէմ, որ առաջնորդին առաջարկեցին ոչ խնդիր, ինչպէս
առաջի օրը, այլ ուղղակի բողբոջ տեսչի հայհոյանքների դէմ և
յայտնեցին թէ հրաժարուում են հնազանդուել այդպիսի անպար-
կեշտ տեսչին, որպիսին Արզանեանցն է: Թեմակալը հանգստացրեց
աշակերտներին, յետ ուղարկեց նրանց դպրոց և խոստացաւ այ-
ցելութեան գնալ նորանց առաւօտը:

Երեկոյեան ուշ լինելով աշակերտները վերադարձան դպրոց,
կատարեալ յոյսով, որ առաւօտ Առաջնորդը գալու է: Հասան
դպրոց և ինչ են տեսնում: Դպրոցի երկյարկանի մեծ շինութիւնը
լցուած է օտար մարդիկներով, հոգաբարձուների ծառաներով և
այդ խաժամուծ ամբոխը զրահաւորուած է փայտերով ու թոկե-
րով: Դպրոցի գոները ներսից փակել էին, որ զբոխը ներս չմտ-
նեն: Ահագին գոռում ու տղմուկ է լսուում դպրոցի ներսից հայե-
բէն, վրացերէն, ուսերէն: Որոնում, որսում են աշակերտներին,

բռնում կապում են թոկերով, զարկում են փայտերով, չեն ջո-
կում աչք, քիթ, երես, գլուխ, զարկում են որտեղ դիպչի, թա-
փում են անխնայ հարուածներ, չեն ջոկում հիւանդը առողջից,
մեծը փոքրից, մի խօսքով դժոխք:

Մատաղահաս աշակերտները լալիս էին, դողում էին սարսա-
փից, չգիտէին որ անկիւնը թագնուին խաժամուծ ամբոխի ձեռ-
քից ու հարուածներից: Ոմանք աշակերտներից դպրոցի գոները
ներսից փակ գտնելով, մնացել էին դուրսը մոլորուած:

Այդ սոսկալի բոպէին յանկարծ երևաց հոգաբարձու Ալէք-
սանդը թայրեանը բերելով իւր հետ զեսեատնիկներ և կվար-
տայներ ու զազանի պէս գոռալով, հայհոյելով և ոտերը գետին
զարկելով հրամայում էր ծառաներին բռնոտել հասակաւոր աշա-
կերտներին և տանել ոստիկանատունը: Իսկ մատաղահասներին
հաւաքել տուեց մի տեղ, պտուկեցնել տուեց և առանց բացառու-
թեան բոլորին էլ պատժեց ռոզգիով, ուշ չդարձնելով հիւանդների
աղերսանքին և փոքրերի աղաղակին: Որոնք այս հանգամանքից
փախուստ էին տուել, նրանց էլ որոնեցին փողոցներում և տա-
րան ոստիկանատուն:

Փախստական աշակերտներից ոմանք բնակարան չունենալով
ցուրտ գիշերն անց են կացնում վանքի եկեղեցու պարիսպների
տակ, իսկ ոստիկանատուն տարած հասակաւոր աշակերտները
ենթարկուում են այնտեղ ծաղր ու ծանակի: Մինչև անգամ դե-
սեատնիկները աւելնելը տալով աշակերտների ձեռքը, ցոյց էին
տալի արտաքնոցները...

Կալանաւոր աշակերտներին առաւօտը վերջապէս ազատում
են և նորանցից 5 աշակերտների զրգոցուցիչ համարելով հոգա-
բարձութիւնը արտաքսում է, և մի քանի օրից յետոյ նորից
կանչում է ու աւարտման վկայականներ տալով ձեռքները, ար-
ձակուած է համարում իսպառ...

Ժրաջան հոգաբարձութիւնը որքան աշխատում է ծածուկ
պահել հասարակութիւնից այս խայտառակ դէպքը, այնու ամե-
նայնիւ արագութեամբ տարածում է քաղաքի մէջ ու ականաւոր
քաղաքացիք արգար զայրոյթով լցուած, բողբոջում են Առաջնոր-
դին և պահանջում են շուտափոյթ արձակել և հոգաբարձուներին
և Արզանեանցին: Վերջինս իսկոյն արձակում է, իսկ ներսէս
կաթուղիկոսից նշանակուած ամփոփոխ հոգաբարձուները այս
անգամ էլ թողնում են իւրեանց պաշտօնի մէջ, իբրև մինչև
Մատթէոս կաթուղիկոսի ժամանելը Թիֆլիզ:

Ահա թէ որքան թանգ է արժենում Հիւսիսափայլի ընթեր-
ցումը Թիֆլիզում:

Այս դէպքը անկասկած յիշելիս կլինին ներսիսեան դպրոցի

այն ժամանակի (1858 թ.) սաները, որոնք կան և այժմ:

Վերոյիշեալ քաջագործութեանց հեղինակ Թայիրեանը 1861 թէ 1862 թուին գալով Մոսկվա, սրբազան պարտականութիւն համարեց ներկայանալ Ստեփաննոս Նազարեանցին սորա բնակարանում: Բայց Նազարեանցը այս անցքերին տեղեակ լինելով, չընդունեց հիւրին և ճանապարհ դրեց իւր նախասենեակից:

Այս բարոյական պատիժը, որ հասցրեց Նազարեանցը Թայիրեանցին, խիստ արագութեամբ տարածուեց Մոսկվայի փոքրիկ հայ գաղութում և մի առժամանակ դարձաւ հասարակաց խօսակցութեան նիւթ: Ոմանք կողմնակից էին Նազարեանցին, ոմանք դատապարտում էին նրան, անուանելով նորան կոպիտ, անքաղաքավարի . . .

Բայց Նազարեանցը ոչ կոպիտ էր և ոչ անքաղաքավարի, այլ անկեղծ էր, երեսպաշտութիւն չունէր, մարդու երեսին կասէր և դորա համար ոմանց գաղափարով նա կոպիտ էր: Թայիրեանցի վերաբերութեամբ ոմանք էլ դատում էին թէ Նազարեանցը կարող էր ընդունել հիւրին և եթէ ուզենար կարող էր նախատել: Այդ գաղափարի էի և ես, որի համար Նազարեանցը նկատողութիւն արաւ թէ «եղբայր պատուական—այսպէս էր դիմում նա մարդու,—անկեղծութիւն չէ որ ես ընդունեմ և իմ տանս նախասենեակ իմ գաղափարների թշնամունս»:

Թայիրեանցն էլ ունէր միայն մի բացատրութիւն, իւր արածը ոչ ոքի չէր յայտնում Մոսկվայում, բայց հանդիպողին հաւատացնում էր թէ «Նազարեանցը կպելու գիտ է» . . . Գ. Լէօն ընդունելութեան հանգամանքը պատմում է, բայց պատճառը չէ բացատրում և Թայիրեանի անձնաւորութիւնը չէ յայտնում:*

Նազարեանցի դէմ յարուցած գործողութիւնները Թիֆլիզում սորանով չէ վերջանում. այլ յառաջ են գալիս նաև 1861 թուին, երբ գլուխ է բարձրացնում Առաքել վարժապետ Արարատեանը:

Այդ թուականի սկզբում էջմիածնի Սրբազան Սինօղը՝ Վեհափառ Հայրապետի հրամանով, Ապրիլի 30 № 834, պատուիրում է Թիֆլիզի թեմակալ առաջնորդ Սարգիս եպիսկոպոս Զալալեանին (երեւի և միւս թեմակալներին) ունենալ արթուն հսկողութիւն, որպէս զի հաւատացեալ հօտի մէջ չերևան մոլար վարդապետութիւն լիւտերականութեան և վաճառումն զանազան գրեանց այսպիսի (լիւտերական) բովանդակութեամբ:

Զալալեան եպիսկոպոսը իւր աշակերտութիւնը ցոյց տալու նպատակով կաթուղիկոսի առաջ իւր մի գրութեան մէջ լիւտե-

* Լէօ. Ստ. Նազարեանց հատ. Բ. երես 569—570.

րականութեան պատկանողների շարքին դասաւորում է նախ և առաջ Շանշիեանցին և Նազարեանցին:

Այդ հետաքրքրական յայտարարութեան պատճէնը ես ստացել եմ Մոսկվայում 1861 թուականին: Յայտարարութիւնը 1861 թուականի Յուլիս 4-ից № 153 գրուած է Վեհափառ Հայրապետի անունով և ունի հետեւեալ բովանդակութիւնը:

«Լուսաւորչեան Սինօղն Սրբոյ էջմիածնի հրամանաւ յ30 ապրիլի այս ամի № 834, պատուիրէ ինձ զգուշանալ յայսմ թեմի ունիլ արթուն հսկողութիւն, զի մի երեսացի ի հօտին մերոյ մոլար աղանդաւորութիւն լուտերականաց և մի ոք ի գրավաճառաց իշխեսցէ վաճառել զգրեանս աղանդաւորաց և ի նշմարիլն խսկոյն ջան դնել զառաջս ունիլ այնպիսեաց և զգրեանս առաքել էջմիածին»:

Առ որ փութամ խոնարհարար հասուցանել ի գիտութիւն Վեհափառութեան Ձերոյ, թէ ի մտանելն իմ ի կառավարութիւն թեմիս, յորում ժամանակի ազնուական Պետրոսն Շանշիեանց տեսուչն Ներսիսեան զպրոցի ինքնին կատարէր զգասատութիւն կրօնագիտութեան և քրիստոնէական վարդապետութեան ի զբարոցին, հաւաստի լինելով իմ թէ գասատութիւն նորին յերկոսին առարկայսն ևս են ըստ ամին վնասակարք և աշակերտք խմորեալ են և խմորին, իսկոյն փոյթ կալայ անհետացուցանել ի միջոյ զմոլար գասատութիւն Շանշիեանցի կատարելով զպաշտօն տեսչի, իսկ զգասատութիւնս երկուց առարկայից թողլով յիմ վերայ: Սակայն այս օրինակ բարենպատակ առաջարկութիւն իմ լինելով հակառակ ցանկութեան և նպատակի Շանշեանցի, նա այլ ևս չկամեցաւ մնալ միայն ի պաշտօնի տեսչի, հրաժարեցաւ ի զբարոցէն, այնուհետև սկսան զբոլի կուսակիցք և համախօնք նորա յիմ վերայ զանազան անստորադիր նամակօք ի զանազան տեղիս, մինչև անգամ ձանձրացուցանել նաև գտելիս Սրբութեան Ձերում, յորմէ յայտնապէս երեւի թէ ի սկզբանէ անտի չեմ մնացեալ անհոգ վասն ոչընչացուցանելոյ և անհետացուցանելոյ զձագեալ ի մերում վիճակի շունչ օտար վարդապետութեան, մինչ զի զաշակերտեալս ի նոյն միտս մոլարս ի ձեռն պ. Շանշեանցի, հազիւ հազ մարթացայ ցրուել և զգուշացուցանել, որոց վասն բարձրացան այսքան տարածայնութիւնք. ապա թէ ոչ չիք այլ պատճառ բացի Շանշեանցէ: Արդ յիմում վիճակի ունեցեալ եմ և ունիմ միշտ զհսկողութիւն ազատ պահպանելոյ ի նոյն աղանդոյ զհաւատացեալ ինձ հօտ Գրիստոսի»:

«Սակայն զիրքն «Վարդապետարան կրօնի» յորինեալ ի նազարեանցէ, որ լի է աղանդաւորութեամբ լուտերականաց, ի ձեռս բերել և ոչընչացուցանել զայն մարթէ տնօրէնութեամբ Վեհա-

փառութեանդ. ըստ որում իրաւաբանեալ է այն գիրք ստորագրութեամբ Մատթէոս արքեպիսկոպոսի գոյ արժանի տպագրութեան և բաժանեալ յամենայն վիճակս, որոյ զմի օրինակն ընդ այսմ մատուցանեմ ի նկատողութիւն Վեհափառութեանդ, յորմէ իսկապէս ունի տեղեկանալ Սրբութիւն Ձեր թէ քանի սխալանք են ի նմին ընդդէմ ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցոյ, յորում Առաքել վարժապետ Արարատեան թէ քանի քանի սխալանս գտեալ է, ահա ընդ այսմ մատուցանեմ և գյորինեալ ի նմանէ «Մխալանք վարդապետարան կրօնի» ի նկատողութիւն: Նմանապէս և գերապատիւ Մսերն Մսերեանց ի «Ճոռքաղի» իւրում հրատարակեալ զինչ ինչ պակասութիւն այնր «Վարդապետարան կրօնի» Նազարեանցի:

«Եթէ աշխարհական անձինք գտին զմատեանն այն լի մուլար վարդապետութեամբ, ապա որպէս վստահացաւ Մատթէոս արքեպիսկոպոսն իւրով ստորագրութեամբ թոյլ տալ ի լոյս ընծայել և մուծանել զայն ի տպագրութիւն, մանաւանդ թէ չմտաբերեաց երբէք, զի սրբազան նախնիք մեր որպէս ունեցեալ են փոյթ զառաջն առնելոյ այնպիսեաց:

«Այժմ առաւել քան զառաւել աղանդն բողոքականաց ի Շամախի տարածի ի ձեռն ումեմն Սարգսի՛ աշակերտոյ ի Գերմանիայ և յոյժ հարկաւոր է զառաջն առնել որքան հնար է փութով: Ես ի 1848 ամի ի լինելն իմ անդ բաւականին արարի անհետ. բայց յետ գնալոյ իմոյ ի Ռուսաստան, Սարգիսն այն եկեալ առ հանգուցեալ կաթողիկոսն ամենայն հայոց վերստին ընկալեալ է զհրաման զաստուութեան՝ թագուցանելով իսպառ զիւրն մթերեալ չարութիւն:

Միմիայն հնար ապաքինելոյ զայն ազգակործան վէր ճանաչէ ծառայ Ձեր հեռացուցանել զՍարգիսն անտի և յանձնել զժողովորդն միոյ ուսեալ քահանայի, որ իցէ կրթեալ ի խոհեմութեան և ի խորագիտութեան»:

Վեհափառ Հայրապետից Մատթէոս եպիսկոպոսն ստացաւ խիստ յանդիմանութիւն, որ յանդգնել է Վարդապետարան կրօնի գիրքը թոյլ տալ տպագրութեան առանց քննութեան:

Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեան վերոյիշեալ յայտարարութիւնը, ինչպէս երևում է ամսաթուից մի առանձին ազդեցութիւն չէր կարող ունենալ էջմիածնում, որովհետև Ջալալեանը գրել է Յուլիսի 14-ին, իսկ Սրբազան Սինոդը Նազարեանցի գրքերի մասին կարգադրութիւնը արել է նոյն Յուլիսի 8, ուստի 4 օրում Ջալալեանի յայտարարութիւնը ոչ կհասնէր էջմիածին և ոչ էլ Նրա համաձայն կարգադրութիւն կլինէր Նազարեանցի վերաբերութեամբ: Ուրեմն, հաւանականը այն է, որ Սինոդի Յուլիսի 8

կարգադրութիւնը հիմնել է Ձերքեզեանի յայտնի գանգատի վերայ, այլ և 1861 թուի Ապրիլի 30 № 834 նախագրուշական շրջաբերական է ուղարկել Թիֆլիզի թեմի առաջնորդին:

Ջալալեանի յայտարարութիւնը աւելորդ անգամ հաստատում է հեղինակի հակառակ հայեացքը վաթսուական թուականների հոսանքի դէմ:

IV

Մատթէոս Կարողիկոսի կարգադրութիւնը Նազարեանցի գրքի դեմ. Դժեք Նազարեանցի կեանքից.

Թիֆլիզի ցոյցերից յետոյ անցնենք կրկին Մոսկվա և տեսնենք ինչպէս ընդունեց Նազարեանցը էջմիածնի Սրբազան Սինոդի կարգադրութիւնը կրօնական գրքերը գրաւելու խնդրում:

1861 թուին, չդիտեմ որ ամսում, այցելութեան գնացի Նազարեանցի մօտ: Սովորաբար ընդունելուց յետոյ պատմեց որ Մոսկվայի Գեներալ-Նահանգապետի (կոմս Զակրեսկի) հրամանով, մի քանի օր սասջ եկել են իւր, Նազարեանցի, բնակարանը, (սեփական տուն և խմբագրութիւն *Дружеская* փողոցում) Գեներալ-Նահանգապետի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ և տեղական թաղի ոստիկանական պրիստաւը, բերելով իւրեանց հետ Սրբազան Սինոդի հրամանագրութիւնը: Այս աստիճանաւորները յայտնել են Նազարեանցին իւրեանց ցաւակցութիւնը և զարմանքը: Նազարեանցը քաղաքավարի ընդունելուց յետոյ բացել է նրանց առաջ իւր մատենադարանը թէ իւր առանձնասենեակում երկրորդ յարկում և թէ ներքին յարկում, ուր հազիւ գտնուել է մի օրինակ «Վարդապետարան կրօնի» որ Նազարեանցը ինքն է որոնել, գտել և առաջարկել ռուս աստիճանաւորին: Այլ ևս ուրիշ ոչ մի դէպք, անախորժութիւն չէ պատահել:

Բայց ինքը, Նազարեանը, ըստ սովորութեան, երբ հարցը վերաբերում էր հայ հոգևորականութեան, իսկոյն վրդովւում էր և վատ տրամադրութեան փոխւում: Այդպէս էլ իմ ներկայութեամբ: Աստիճանաւորների, այցելութիւնը պատմելուց յետոյ Նա վրդովւեց արդէն կուտակուած նախկին զգացմունքներով հայ բարձր հոգևորականութեան դէմ և մի քանի բոպէից յետոյ ուղղուեց աթոռի վերայ, ձեռքն առաւ մի գրած թերթ և սկսեց զննել աչքերով: Այդ թերթը Սինոդի հրամանն էր և ստորագրել էր Սինոդի անդամ արքեպիսկոպոս Յորեան: «Յորեան» ազգանունը

կարծես օտարօտի թուաց Նազարեանցին, որ 2—3 անգամ կրկնեց հայերէն արքեպիսկոպոսի անունը և վերածելով նրան ուսերէնի սկսեց ծիծաղել և արտասանել ЧТО ЗА ФАМИЛИЯ . . .

Սրբազան Սինոդի վերոյիշեալ կարգադրութեան լուրը արդէն տարածուել էր Մոսկվայի հայ գաղութում, ուր, բնական է, ոմանք զայրանում էին խօսակցութեան ժամանակ, ոմանք ուրախանում էին և ոմանք էլ անտարբեր էին:

Անտարբեր չէր միայն ինքը, Նազարեանցը: Նա ետում էր բարկութիւնից, անպատուութիւնից և չկար մէկը, որ դուրս գար հրապարակ և անկեղծօրէն խօսէր ճշմարտութիւնը զյարգս յարգաւորաց և զպատիւս արժանաւորաց: Նա, ըստ երևոյթին, վճռել էր ինքը իւրեան պաշտպանելու: Ենթադրում եմ այն հիման վերայ, որ այդ միջոցներում ես և Մարտիրոս Սիմոնեանցը միասին այցելութեան գնացինք Նազարեանցին և Նա կարգաց մեր առաջ մի շատ ընդարձակ յօդուած ուսերէն լեզուով գրուած առ ուսւ հասարակութիւնը:

Յօդուածը մի ահագին բողոք էր Նազարեանցի հայ բարձր հողևորականութեան դէմ. դուրս էր բերած վերջինիս հին ժամանակներից չար նախանձը և տգիտութիւնը, յետադիմութիւնը՝ յառաջադիմութեան թշնամութիւնը և վերջապէս իւր դէմ զրահաւորումը և այլն: Նա դիտմամբ կարգում էր, որ մեր կարծիքն իմանայ, կամենում էր տպագրել հայատեաց Կատկովի խմբագրութեամբ լոյս տեսնող Московскія Вѣдомости լրագրում, որ այդ ժամանակ խիստ տարածուած էր և ունէր հասարակութեան մեծամասնութեան վերայ մեծ ազդեցութիւն: Կասկած չկար որ Կատկովը երկու ձեռքով կրճէր և նրան ձեռնտու էր, որովհետև Նա այդ ժամանակ, Ռափայէլ Պատկանեանցի ուսանողական անմեղ երգերից «հայոց երիտասարդներուն, հայրենիք պաշտպանողներուն, որոնց անկումն էլ սուրբ է մեզ, այս բաժակը նուիրինք» կամ «Մանուկ Հայաստան» հանելով այս կտորները և մատի փաթթան անելով, քաղաքական առաջնորդներ էր գրում և հալածանք քարոզելով հայ ուսանողների դէմ, հասկացնում էր ում հարկն է, որ իբրև թէ հայերը անջատման ձգտումներ ունեն, մի հանգամանք, որ ոչ մի հայի մտքով չէր անցկացած: Սպառնալիք յայտնեց Կ. Եգեանին:

Երբ յօդուածի հրատարակութեան համար անհաւանութիւն գտաւ մեր կողմից, Նազարեանցը զարմացմամբ մեզ պատասխանեց՝ որ այս ինչ ուսւ կին իւր տունը հիւր եկած, հաւանեց և խորհուրդ տուեց տպագրելու...: Նազարեանցի այս դիւրահաւատութիւնը զարմանալի չէր, Նա ամենին անկեղծ համարելով հաւատում էր... Կային մարդիկ, որ Նրա երեսին շողքորթում էին,

զովում գովարանում Հիւսիսափայլի ուղղութիւնը, բովանդակութիւնը, լեզուն... և Նազարեանցը ընդունում էր:

Ես կարծում եմ որ հետաքրքրական կլինի ընթերցողի համար, եթէ այստեղ յիշատակեմ մի քանի գծեր Նազարեանցի կենցաղից և ընաւորութիւնից, որին քայլ առ քայլ մօտեցրեց այժմ յիշողութեանս պատմութիւնը:

Վաթսունական թուականներում Նազարեանցը իւր ընտանիքով ապրում էր իւր սեփական երկայարկանի տանը Черногрязка փողոցի վերայ Мясницкая թաղամասում. Սյդ սահմանը գտնուում էր մօտաւորապէս Հայոց եկեղեցու և Պետրոգրադի երկաթուղու կայարանի միջև: Նրա գերդաստանի թիւն էր հետեւեալը: Երկու ծնողներ, երկու դուստր ու երկու արու զաւակներ:

Առաջինն էր Ֆրիդրիխ, որի անունն վերայ, օտար հայի հետ ծանօթացնելու ժամանակ Նազարեանցը ինքը աւելացնում էր «Եսայաս», այսպէս «Ֆրիդրիկոս-Եսայաս»: Մօտ 22—23 տարեկան սիրունատես երիտասարդ էր, ուսանող Մոսկուայի համալսարանի բժշկական բաժնի, որ և չաւարտած՝ մահացաւ:

Երկրորդն էր Իւլիա, ամօթխած օրիորդ, որ այդ թուերում ամուսնացաւ Մոսկուայում ազատ ուսանող Երևանցի Տէր Յովակիմեանցի հետ: Վերջինս պսակուելուց յետոյ վերադարձաւ իւր հայրենիք և այն տեղ պարապում էր միջնակարգ դպրոցներում ուսուցչութեամբ:

Երրորդն էր Ալէքսանդր, վայելչադէմ պատանի, որ այդ միջոցին սովորում էր Մոսկվայի գիմնազիաններից մինում:

Չորրորդ և վերջինն էր Օլգա, որ ապագայում ամուսնացաւ բժիշկ Միսաք Արամեանցի հետ և մեռաւ Սալիանում իւր ամուսնու մահից առաջ:

Պ. Լէօն Նազարեանցին յատկացնում է և մի արու զաւակ՝ Էմմանուէլ, որի մասին ես երբէք լսած չեմ նոյն իսկ Նազարեանցի ընտանիքում: Պէտք է ասել, որ Նազարեանցի բոլոր զաւակներն էլ էին վայելչադէմ, հեղաբարոյ, պարկեշտասուն և յարգանքով դէպի ծնողները:

Նազարեանցը սիրում էր իւր այս զաւակների հետ, բայց առանց նրանց մօր, երբեքն էլ առանց մեծ որդու, հետ գնալ իւր մօտիկ բարեկամ հայերի մօտ, կամ զբօսնելու գնալ հասարակաց զբօսարաններ կամ տօն օրերին գերմանական եկեղեցի յաճախել քարոզ լսելու: 1861 թուականի ամառը Նա իւր զաւակներով այցելեց մեզ—ինձ, Սիմոնեանցին և Գրիգոր Բիւշարեանցին, երբ երեք ուսանողներս միասին մի բնակարանում ապրում էինք Богородская գիւղում Ետուզա գետակի վերայ, СОКОЛЬНИКИ արուարձանի մօտ: Անտառի ծաղկափնջերով աշխատում էինք զուարճացնել երեխանցը:

Նազարեանցի առաջին ամուսինը, Գորբաթցի, խիստ նախադաս էր համարում զբաղուել իւր մանուկների կրթութեամբ և անտեսութեամբ: Դրա համար Նա շատ հազիւ էր երևում—տարին 2-3 անգամ ամենամօտիկ հայ հիւրերին և իւր 3 զաւակով ապրում էր տան ներքի, այսինքն առաջին յարկում ուր և սեղանատունն էր: Նազարեանցը ինքը և մեծ որդին ունէին վերի յարկում իրար կից ննջարաններ հոյն և զբաղմանց առանձնասենեակ սովորական այցելուների համար դահլիճը վերի յարկումն էր:

Նազարեանցի այն այցելուները, որոնք շատ ընտանեկան չէին, անցնում էին Նազարեանցի առանձնասենեակը դահլիճով և Փրիդրիկոսի սենեակով: Սակայն կային շատ մտերիմներ—Մելքոն Փանեան, Սմբատ Շահաղիզ, Յակոբ Սերովբեան, Մարտիրոս Սիմոնեանց, Գաբրիէլ Տէր Յովհաննիսեանց և սակաւ ումանք—որոնց ընդունում էր՝ նախասենեակից մի փոքր դռնով ուղղակի իւր առանձնասենեակը:

Նազարեանցը յարգում, պատուում և այցելում էր տեղական հայ քահանաներին, այժմ հանգուցեալ, Տէր Մովսէսին և Տէր Յարութիւնին, որոնք բնակւում էին հայոց եկեղեցու բակում: Այնտեղ էր բնակւում և մագիստրոս Մսեր Մսերեանցը:

Տան մէջ ընտանեկան լեզուն գերմաներէնն էր և Նազարեանցը ինքը երեխանց հետ խօսում էր գերմաներէն. Նրա կինը, Գորբաթցի—գերմանուհի, դժուարութեամբ էր խօսում ռուսերէն նրանց հետ, որոնք չգիտէին գերմաներէն: Յայտնի բան է, երեխայքը վարժ գիտէին և ռուսերէն:

Ամբողջ տան մէջ հայախօս միմիայն Նազարեանցն էր, որ վարում էր տան մէջ առանձնակի կեանք: Ծառայութիւնից վերադառնալով՝ Նա փակւում էր իւր առանձնասենեակում և խալաքը հագած նստում էր իւր գրասեղանի առաջ և զբաղւում էր գրութեամբ և ընթերցանութեամբ, թողնելով ընտանեկան հոգսը իւր կնոջ վերայ: Նա իջնում էր ներքի յարկ միայն ճաշելու և ընթերելու ժամանակ:

Այսպիսի հանգամանքի մէջ, Մոսկուայի պէս տեղում, շքեղապատուած օտարներով, Նազարեանցը իւր առանձնասէր կեանքով, միայնակ, թէկուզ անհուն ցանկութեամբ, «մայրենի լեզուն, մայրենի բարբառը, ախորժ ընտանի իւր հոգու համար» կարող էր լինել միայն Նազարեանցի և ոչ Նրա ընտանիքի համար:

Սակայն կային մարդիկ 60 տարի առաջ, կան և 60 տարի յետոյ որ այդ բանում մեղադրում են Նազարեանցին, մոռանալով, որ հէնց այդ մեղազրոյնների ընտանիքներում այս բոլորիս էլ տիրապետում է օտարախօսութիւնը:

Որքան էլ Նազարեանցի ընտանիքը հեռու լինէին հայ լեզուից

և հայ կեանքից, այնուամենայնիւ Նազարեանցը ինքը ոչ միշտ մտածում և խորհում էր հայերի վերայ, այլ և հայութեան յետաճացութիւնը միշտ այրում էր նրա հոգին և մաշում էր նրա սիրտը... Այս խօսքերը ես կրկնում եմ 60 տարի յետոյ իբրև ակնատես, իբրև կենդանի վկայ:

Երբ մի կողմից տեսնելով հայութեան յետադիմութիւնը և նրա գլուխ կանգնած հայ հոգևորականութեան խաւարամտութիւնը և միւս կողմից այդ հանգամանքների դէմ մաքառելու իւր անզօրութիւնը ու անյաջողութիւնը, Նազարեանցը, հիւրերի շքեղանում իւր խօսակցական դատողութիւնների ժամանակ ուղղակի կատաղի վրդովման մէջ էր ընկնում: Այս ի՞նչ երևոյթ էր, անհուն սէր էր դէպի իւր ազգը, թէ ատելութիւն էր դէպի նա. եթէ վերջինն էր, թի կամ ի՞նչն էր ստիպում Նազարեանցին տանջուել, մաշուել, այրուել, աչքից ընկնել, կորցնել իւր հանգիստը և հոգւոյ անզօրութիւնը:

Այլ էր նրա գրիչը և այլ էր նրա սովորական գրոյցական դատողութիւնը: Գրչի տակ հայերը և «Սիրելի» էին և «Թանկագին», բայց երբ հասարակ մասնաւոր վիճարանութեան ժամանակ խօսքը թէկուզ պատահմամբ վերաբերում էր հայ ազգին կամ նրա հետ կապ հայ հոգևորականութեանը, այդ ժամանակ Նազարեանցը ընկնում էր մի անսահման վրդովման մէջ: «Հայ ազգին հարկաւոր է դնել երկու տախտակի արանքում և սղոցել միջին... այո, սղոցել... սղոցել... Հայ ներկայ հոգևորականութիւնը հարկաւոր է ջնջել... արմատախիլ անել... ոչընչացնել...» կրկնում էր Նազարեանցը:

Այդ բոլորներում խօսակիցները մնում էին լուռ հանգիստես, ասպարէզը թողնելով Նազարեանցին իրան, որպէս զի ցասումը աստիճանաբար իջնի, որովհետև եթէ ջատագովէին նրա ասածները կամ ընդդիմախօսէին, երկու դէպքումն էլ կբաղմապատէին նրա վրդովմունքը: Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով, ես և Մ. Սիմոնեանցը, երբ պատրաստուում էինք դնալ միասին այցելութեան Նազարեանցին, մենք կանխապէս պայմանաւորուում էինք, որ աշխատենք կարելոյն չափ հեռու պահել խօսակցութեան թիւը հայութեան կամ նրա հոգևորականութեան մասին եղած հարցերից:

Ասում էին թէ Նազարեանցը հայ եկեղեցու փոխարէն յաճախում էր դերմանահան—լիւտերական եկեղեցի, մի հանգամանք, որ նա երբէք չէր թաղցնում և շատ անգամ տանում էր հետը իւր երեխանց: Նա քանիցս անգամ խոստովանել է, որ գերմանեկեղեցում պատար վեպհոֆը (կարձեօք այսպէս պէտք է լինէր իսկական աղքատունը) շատ նշանաւոր բարոյական քարոզներ էր

խօսում տօն օրերը. և Նազարեանցին շատ հաճելի էին այդ քա-
րոզները: Իսկ հայոց եկեղեցում մի էր խօսում քարոզ, ոչ ոք:

Սրա հետ կապում էին այն հանգամանքը, որ Բագելում բո-
ղոքական քարոզչութեան համար պատրաստող հայ երիասարդ-
ները Մոսկուայից անցնելիս այցելում էին Նազարեանցին: Յի-
շում եմ, որ մի անգամ Նազարեանցն ինձ յայտնեց թէ, եթէ
երեկ պատահէիր այստեղ (իւր տունը) ես քեզ կձանձօթացնէի:
Աբրահամ Ամիրխանեանի հետ, որ նոր էր վերադարձել Բագելից:
Այստեղ դատապարտելի ես ոչինչ չեմ տեսնում: Գիտէի, որ եր-
բեմն դիմում էին Նազարեանցի խորհրդին, ցանկալով օգուտ քա-
ղել նրա բարութիւնից, փորձառութիւնից, անկեղծութիւնից և
զուցէ Ամիրխանեանցի կամ Ամիրխանեանցների այցը այդ իսկ
նպատակն է ունեցել: Վեց տարի մօտ ծանօթ լինելով Նազարեան-
ցին ես երբէք չեմ լսած նրա բերանից որ և է արհամարանք դէպի
հայոց կրօնը: «Աստուած ստեղծել է քեզ հայ, եղիր հայ» կրկնում
էր Նա: Խօսքս վերաբերում է հայ կրօնին և ոչ հայ հոգևորակա-
նութեան:

Տարաբաղդարար այսօր էլ կան մարդիկ, անգամ առաջաւոր
համարուած հոգևորականներ, որոնք առանց քաշուելու հրապա-
րակով յայտնում են, թէ Նազարեանցը խմորուած էր լիւտերակա-
նութեան մէջ և օրինակ են բերում, չգիտեմ սրտեղից վերցրած,
պ. Լէօն անէկզօտը, որ Ղազան քաղաքում հայ քահանայ չգտնե-
լով Նազարեանցը ինքն է իբրև թէ մկրտել իւր որդուն տաք ջրի
մէջ լողացնելով: Այս կարծիքը յայտնեց Բագուեցի մի հայ աւագ
քահանայ գրական-գեղարուեստական տկումբում 1913 թուականի
Յունուար 26 շաբաթ օր, ուր հաւաքուել էին հայ գրական մար-
դիկ զրուցելու «Ս. Նազարեանցի նշանակութիւնը հայկական գրա-
կանութեան և կուլտուրայի համար» հարցի մասին:

Իբրև լեզուագէտ՝ Նազարեանցը խոնարհուում էր գերմանա-
կան լեզուի բարձրութեան առաջ, խոստովանելով, որ այդ լեզուով
կարելի է լինում արտայայտել ամեն մի բարձր, վեհ, փիլիսո-
փայական միտք, գաղափար՝ և այլն, իսկ հայոց աղքատ և թշուառ
լեզուի մասին նա ընդունում էր այն գաղափարը, թէ գրական
լեզու ստեղծելու համար չի կարելի վերցնել միայն մի որ և է
բարբառ, այլ գրականութիւնը մշակուելով ինքը կստեղծի իւր
համար մի կոթող, կամ ինչպէս ինքը՝ Նազարեանցն էր արտա-
սանում ուսերէն, մի Литературный Монументъ.

Ուստի նա իւր աշխարհաբար լեզուն չէր ընդունում իբրև
մի մշակուած և կարող լեզու, որ դառնար Литературный Мону-
ментъ, այլ իբրև փորձ: Նա շատ եռարճանում էր Աղթամարի
վանքի վանահօր խօսքերով նոյն իսկ Նազարեանցի մասին, որ

երեկ էր իւր նկարագրութեան մէջ Յակոբ Մելիք Յակոբեանցը:
աւ յիշում եմ, որ մի երեկոյ, իւր առանձնասենեակում, Նազար-
եանցը հիւրերի առաջ, սրտանց ծիծաղելով, կարդաց Հիւսիսա-
այլի մէջ վանահօր խօսքերը, «ձո, Նազարեանց, ի՜նչ ըսեմ քեզի,
դու միշտ Մոսկվայէն կրոնաս թէ աշխարհաբար պիտի գրել և
մտածել, որ ամեն մարդ հասկանայ: Տեսնե՞ք քո աշխարհաբարն
է խրթին, թէ Նարեկը կամ Լամբրոնացիի ճառերը, քաւ լիցի
թէ ես մէկ բան ալ կհասկանամ»:

Վիճաբանութեան ժամանակ Նազարեանցը խօսում էր ծանր,
առանց շտապելու, բայց թեւերը շարժելով և աչքերը դէպի վեր՝
կոպերն այնպէս էին արագ խաղում, որ համարեա ծածկում էին
աչքերը: Նա դիմում էր խօսակցին «եղբայր պատուական» բա-
ւերով: Լուռ վայրկեաններում դէմքը թեքում էր աջ կողմի վերայ
և յանկարծ նորից ուղղուելով նայում էր դիմախօսին...

Ես կենսագրութիւն չեմ գրում, որ մանրամասնութիւններ
աջ բերեմ: Կամեցայ միայն մի քանի գծեր յիշատակել, որպէս
Նազարեանցի անձնաւորութեամբ զբաղուողները, որոնցից ոչ
քը չէ տեսել նրան, կարողանան փոքր ինչ գաղափար կազմել
ս վերայ:

Այսքանս բաւ համարեցի:



* «Աղթամարայ Վանք» Հիւսիսափայլ 1860 թ. Նոյեմբեր:

ՀՀ Ազգային գրադարան



NL0398406

66.576